



Լևոն Շանթ

Երագ օրեր

3

Յունիս 21

այսօր ամբողջ օրը Տուրգենևի թարգմանութեանն էի տուած: Գործս յաջող կերթայ: Միայն ինծի կշղայնացնէ պարոն Մկրտիչի մուրճին անվերջ թկթկոցը. պարտէզը աթոռ կշինէ:

Արդէն անոր մուրճին աղմուկը երբեք չի վերջանար: քովի սենեակը, խոհանոցը, պատշգամը միշտ բաներ մը կը հնարէ իր դժոխային մուրճովը զինուած: Բայց ի՛նչ մեղադրեմ խեղճը: մարդս կարո՞ղ է մինչեւ իրիկուն պարապ նստիլ: Ան դեռ շատ աղեկ վարժուած է: Ակնթարթ մի ինծի իր տեղը որ դնեմ՝ սիրտս կճաքի: Ի՛նչ կեանքի դատարկութիւն, ի՛նչ աննպատակ գոյութիւն:

Գիշերը անքնութենէ չարչարուելէ ետքը՝ առտուն կանուխ ելիր ու սաղմոս քաղէ. ետքը քանի մը ունայ թեյ խմէ ու գնայ շուկա, իբրեւ թէ գնումներու, բայց հոս ու հոն հանդպելու ու խօսելու. ետքն ալ թափառէ՝ տան բոլոր անկիւնները դուրս ելած գամ մը, խախտած տոնի մը փնտրելով կամ գնայ խոհանոց քրոջդ ու սպասուիիին օգնելու մինչեւ որ գայ ճաշի ատենը: Կուշտ ճաշէն ետքն ալ գնայ սենեակդ ու պառկէ՛ եւ արթնցիր ուշ ատեն, ինքդ ալ չգիտնալով ինչ ընելու համար:

Եւ ասիկա անվերջ, առանց որեւէ փոփոխութեան. այս տարունէ գալ տարուանը կրնաս երեւակայել: Անվե՛րջ, ճիշտ պարզ տարբերական կոտորակի մը պէս, որ օր մըն ալ կարծես նոյն թիւը գրելէ ձանձրացած՝ կդնես բազմակետ մը. կեանքին

մեծ բազմակետոր ու վերջացաւ:

Եւ ասոր կըսեն ապրիլ: Եւ պարոն Մկրտիչը, որ շատ սիրելի ու խելքը գլխին մարդ մըն է, չի գանգատիր այդ կեանքէն եւ կուզէ ապրիլ, երկար ապրիլ:

Կգարմանամ: ԻՆժի համար ոչինչ ու անարժէք բան մըն է կեանքը, երբ չկայ աշխատանք, մաքառում, ձգտումներ ու կիրք, յուզում ու ծրագիր: Առանց այս բոլոր կենդանի շարժման, առանց այս մշտական հոգեկան եռփին՝ միթէ մահը շատ աւելի իմաստալից ու արժէքատր չէ՞:

Յունիս 24

Երկու օր է «հերոսուհիս» չէի տեսած: Հարբուխ էր եղած եւ իրիկունները դուրս չէր ելլեր: Կարօտի նման զգացում մը կար մէջս. կուզէի տեսնել:

Իրիկունը գիւղէն վերադարձիս, երբ իրենց տան առջեւէն կանցնէի՝ աչքերս անոր կերպարանքը կփնտրէի:

Պատշգամի վրայ եղբարյն էր, որ շեզկունին վրայ երկնցած լրագիր կկարդար: Հեռուէն բարեւեցի եւ հարցուցի օրիորդի առողջութիւնը:

- Բան մը չունի. նագ կընէ. և եղաւ պատասխանը: և Հրամեցէ՛ք վեր. դեռ չէք եղած մեզի:

- Ուշ է քիչ մը. և ըսի վարանքով:

- Եկէք. մայրս ալ, քոյրս ալ ուրախ կըլլան:

Առանց իմ յատուկ որոշման ոտքերս արդէն ուղղուեցան դէպի պատշգամին կից սանդուղները:

Պարոն նկարիչը դէմ եկաւ. եւ երբ պատշգամէն սնեակ մտանք երկուքով՝ մայր ու աղջիկ ոտքի ելան թեյի սեղանէն:

- Աս ի՛նչ հրաշք. և բացականչեց օրիորդը ժպտուն:

- Լսեցի՞ տկար էք. և եղաւ բացատրութիւնը:

Նստեցանք, տիկինը լրացուց քաղաքաւարական հարցերուն շրջանը եւ ծայր տուաւ թեյի սեղանին շուրջը ուստոստուն ու թեթեւ խօսակցութիւն մը:

Օրիորդս ոչինչն չունէ, ր եղբօրը ըսածին պէս. քիչ մը ատելի գիրցած երեւցաւ աչքիս եւ քիչ մը ատելի դժգոյն: Ինքնաեղին դէմը նստած բաժակները կմաքրէր ու մեզի թեյ կմատակարարէր. միեւնոյն ժամանակ կմասնակցէր խօսակցութեան ե՛ւ խօսքով, ե՛ւ իր գուարթ խնդուքով:

Խօսուած լեզուն ռուսերէն էր, բայց ինչպէս եղաւ օրիորդը մէկներկու նախադասութիւն ըսաւ հայերէն եւ շատկարգին, որ բաւականատիւն պատճառեց ինծի եւ զգացումս զսպել չկրցայ:

- Ի՛նչ լաւ ըսիք հայերէնը, օրիո՛րդ: Եւ ինչո՞ւ միշտ հայերէն չէք խօսիր. լաւ առիթ է, կվարժուիք:

- Որովհետեւ աղեկ չգիտեմ. և թսակ նորեն հայերէն եւ ետեւէն իսկոյն ռուսերէնով ատելցուց. և ռուսերէն լեզուով կրնամ միտքս շատ ատելի նուրբ ու հարուստ արտայայտել:

- Այդ նրբութիւնն ու հարստութիւնը պէտք է ամենքը ունենան իրենց մայրենի լեզուով. եւ ասիկա ձեռք կբերուի խօսելով, քանի որ ձեր օտար դպրոցը այդ տեսակետէն օժանդակել չի կրնար ձեզի:

- Մայրենի լեզո՞ւ. և պարցուց հանկարծ տարօրինակ շեշտով մը. և մայրս ինծի հպետ միշտ ռուսերէն է խօսած. այդպէս չէ՞, մամա՛. և դարձաւ մօրը ծիծաղկոտ ու կ էսներգող ձայնով մը:

Ես վայրկեան մը վարանեցայ: Իմ տեսական ընթրնումիս խիստ գործնական պատախասնա մըն էր դէմ առեր:

- Միրելի՛ բարեկամս, այդ բոլորը քիչ մըն ալ ճաշակի խնդիր է. և մէջ նետուեցաւ եղբայրը. և ո՛ր լեզուն որ անուշ ու գեղեցիկ է՝ ան ալ կգործածեն:

- ՉԱյերէնը տգեղ է՝ ըսել կուզէք:

- Շիտակը խօսելով՝ շատ գեղեցիկ չեն գտներ:

- Կարծենք ձեր նկարչական ճաշակը այս հարցին մեջ ձեզ օգնել պիտի չկրնայ. և ըսի ես քիչ մը չոր: Եւ ինչ որ այս կամ այն լեզուով խօսիլը բնաւ ճաշակէ կախուած խնդիր չէ. ձեր քոյրը շատ անելի ճիշտ պատասխանը տուաւ: Երկրորդ ալ՝ պահ մը ձեր ըսածը ընդունելով, ո՞ր կէտ գիտէք հայերէնի տգեղ ըլլալը. ձեր ըսած ու ձեր գիտցած հայերէնովը կդատէ՞ք:

- Ուրիշ ինչն՞ով կուզէք որ դատեն

- Կա՛ հայ գրական լեզու մը ու հայ գրականութիւն:

- Գրականութի՛ւն. և կրկնեց նկարիչը ներողմտիտ հեգնութեամբ մը: Գրականութիւն մը գրականութիւն դառնալու համար պէտք է խոր ու արժէքատր երկեր ու ստեղծագործութիւն ունենայ ի մէջը:

- Դուք կխօսիք ձեր չճանչցած գրականութեան մասին:

Նկարիչը ուտերը թոթուեց, իսկ ես այլեւս լեզուս բռնել չկրցայ.

- Իսկ եթէ նոյնիսկ դեռ չունինք այդ բարձր ու խոր գրական ստեղծագործութիւնները, որ դուք կպահանջէք, ասոր հանցաւորը դո՛ւք էք, պարո՛ն նկարիչ:

- Ե՛ս. և հարցուց խօսակիցս ծիծաղի գարմանքով:

- Այո՛, դո՛ւք, ե՛ս, մե՛նք, մեր երիտասարդութիւնը: Փոխանակ ուրիշներու հասրտութեամբ հպարտանալու եւ ուրիշներու լեզուն առաջ քաշելու, դեռ չունինք այնքան ինքնութիւն ու հպարտութիւն մենք մեր սեփական հասրտութիւնը ունենալու, մեր լեզուն խօսելու, յղկելու ու նրբացնելու, մե՛ր կեանքը, մե՛ր հոգին ու մե՛ր պէտքերը պատկերելու ու արտայայտելու: Բահամարիելը, չի համի ը ու չձգտելը երբեք ոչինչ ստեղծել չեն կրնար: Պէտք է սիրել ու գործածել լեզու, և եթէ կուզէք, որ սրտի ու արժէքներ ստեղծագործէ:

Վայրկեան մը լռութիւն տիրեց:

- Այդ մասին թո՛ղ բանաստեղծները մտածեն. և կամաց մը փեշերը հաւաքեց նկարիչս: և Խնդիրը ինձի չի վերաբերիր. ես նկարիչ մարդ եմ. եւ շիտակը ո՛չ ժամանակ ունիմ, ո՛չլ ալ տրամադրութիւն այդ կարգի բաներու վրայ երկար խորհելու: Այսքանը միայն ինձի պարզ է, որ մենք հայերս հաստ ու կոշտ ժողովուրդ ենք. նուրբի ու գեղեցիկի ըմբռնումը չունինք. իսկ երեւակայութիւն՝ բնա՛ւ:

- Բարեկա՛մ, ատոնք պարապ ու անարդար խօսքեր են: Եւ ինչպէ՞ս կրնար առանց խղճահարուելու պախարակել մաքողջ ժողովրդի մը ընդունակութիւնները: Ժողովրդի մը, որ ձեր մայրն է վերջապէս:

- Ինչո՞ւ պիտի խղճահարիմ, սիրելիս: Մարդ պէտք է ազատ մտածէ եւ պէտք է լայն ըլլայ մեր մտածման հորիզոնը: Նեղ, անձուկ միջնադարեան գաղափարներու ժամանակը անցած է. այս դարը քննադատութեան դար է, Վոլտերներու, Չոլաներու ո գին է մեր դարը դարձնողը:

Չպատասխանեցի: Ներս մտաւ տիկինը եւ խօսակցութիւնը փոխուեցաւ: Ես սաստիկ անհանգիստ էի. շատ ծանր ու անախորժ գգացում մը կճնշէր հոգիիս վրայ, որ հարկադրուած էի գապելու:

Քիչ մը վերջը ծանր քայլերով տուն կվերադառնայի: Լուռ ու խաղաղ գիշեր էր արդեն: Տերեւ մը անգամ չէր դող դղար, վար իյնող աստղ մը անգամ չկար: միայն վարէն գետն էր նորէն, ձորէն, իր հին երգը կկրկնէր ամէն բանի անտարբեր:

Վէճը վերքի մը պէս հետք էր թողեր կրծքիս տակ: Եւ ես ինձի՛ կմեղադրէի. հիմարի պէս էի վարուած: առջի օրէն գիտէի դիմացիներուս կարծիքը. ի՞նչ կարիք կար այս աւելորդ ու անհամ բառամարտին: Ես եւ անոնք տարբեր կեանքով ենք մեծցած եւ տարբեր ոգիով կրթուած: Իրար երբեք չենք հասկնար: Հիմա անշուշտ կհամարեն ինձի նեղ գաղափարներու տէր խղճուկ մէկը: Եւ իրենց վերաբերմամբ իմ մտածածս ալ ատկէ տարբեր բան մը չէ:

Ա՛, ինչո՞ւ գացի ես անոնց տունը:

Յունիս 25

Ամպշող օր մըն էր այսօր: Ճաշէն առաջ նստած սենեակս պատուհանիս տակ կա շխաստէի, երբ Հոռոբսին եկաւ հայտնեց, թէ դրացի օրիորդը եկեր է ու ինծի կհարցնէ:

Շատ զարմացայ. ի՞նչ կուզէր, մանաւանդ երեկուան ծանր հանդիպումէն ետքը. ակամայ կնախատեսէի նոր անախորժութիւն մը: Բայց եւ այնպէս բնականաբար իսկոյն վեր թռայ ու ելայ պատշգամ:

Օրիորդը իր պզտիկ քրոջը հետ մեր սանդուղին առջեւը կեցած շատ սիրալիւր կերպով կխօսակցէր հօրեղբօրս կնոջ հետ, որ մեր պատշգամէն անդադար կկրկնէր, որ գոնէ քանի մը վայրկեան վեր հրամմէ:

Աղջիկը հագիւ բարեւս առաւ, որ ըսաւ:

- Արդեօք քառորդ ժամ մը կրնա՞ք ինծի ընկերանալ. մինչեւ գիտըր, պզտիկ պտոյտ մը: ձեզի հետ խօսելիք ունիմ:

- Ամենայն սիրով. այս վայրկեանիս. և ըսի ես ու սենեակս նետուեցայ:

«Չըլլայ թէ եղբայրը երեկ գիշեր խօսքերէս շատ վիրաւորուած ըլլայ. քոյրը հիմա եկեր է ինծի զգացնել տալու», կմտածէի տանու հագուստս փոխելով:

Պատշգամէն իջայ թէ չէ՝ մեր տիկնոջ ցտեսութիւն ըսաւ եւ իսկոյն ճամփայ ելանք:

Արքունի ուղին էր, որուն վրայէն կքալէինք. երկու կողմէն ձորի կողերն էին թզուկ ծառերու կրկնեցով մը իրենց ուսերուն մերկութիւնը ծածկած:

Կքալէինք լուռ իրար քովէ, տարօրինակ զսպուած յուզում մը կար մէջս, որ անելի կհարհրուէր այս երկրարատեւ ու տարօրինակ լուրթենէն: Իր վարմունքը ամէն տեսակետէն ե՛ր անսովոր էր, ե՛ր անսպասելի:

Մէկներկու անգամ քովնդի նայեցաւ երեսս ու ժպտեցաւ առանց սակայն շրթունքները բանալու: Եւ այսպէս անխօս հասանք մինչեւ այն պզտիկ

կամրջակը, որ խճուղին մեր ասիւն գետի միւս ասիւր կանցրնէ:

Անցանք կամրջակը. գետն ալ ձախէն աջ անցաւ:

- Կա՛տեա, շրջանակդ շղարձնե՛ս. և ըսաւ պզտիկ ուսին զարնելով:

Երբ փոքրիկը շրջանակին ետեւէն վազելով հարթ ճամփուն վրայ բաւական հեռացաւ՝ օրհորդը առանց այլեւայլութեան դարձաւ ինծի.

- Գիտեմ, որ զարմացած էք եւ հիմա ասելի պիտի զարմանաք: Կուզէի հայերեւն սորվիմ: ինչպէ՛ս ընեմ. ինծի ի՞նչ խորհուրդ կուտաք:

- Կանգ առի ու մնացի արձանի պէս: Աղջիկը նոյնպէս կեցաւ դէմս. շիփնշիտակ ու շեշտակի կնայէր աչքերուս. զարմանալի ու փոխուած դէմք մըն էր դէմինս. եւ բոլորովին տարբեր ու լուրջ արտայայտութիւն մը այդ դէմքին վրայ:

- Եւ կուզէի, որ պատասխանէք պարզ ու շիտակ, իբրեւ մօտիկ ու մտերիմ մարդու:

- Պատասխանը ինքնին շատ պարզ է. պէտք է շարունակ կարդաք ու շարունակ խօսիք հայերէն:

- Բայց որո՞ւ հետ խօսիմ. մեր տունը դուք գիտէք. եւ գրական ոճն ու լեզուն դժուար է ինծի հասկնալը միսնմինակ:

- Իրաւունք ունիք, գոնէ սկիզբները պէտք ունիք օգնականի մը:

Աղջիկը հանկարծ քիչ մը գլուխը խոնարհեց եւ գոց հովանոցին ծայրովը գետինը եռանկիւնը մը գծելով ըսաւ.

Եթէ ձեզմէ խնդրեմ, որ դուք ըլլաք այդ օգնականը՝ կընդունի՞ք:

- Ե՛ս. և թաւ հանկարծ կրծքէս յուզումի շեշտով մը, որ զսպել ու քողարկել չկրցայ:

Աղջիկը աչքերը բարձրացուց գետնէն: գամեց նորէն շիտակ աչքերուս եւ ասելուց խիստ լուրջ.

- Շատ կխնդրեմ, որ քաղաքապետութիւն չընէք եւ ձեր հոգին չբռնադատէք. ես կուզեմ միայն ձեր ազատ ընտրութիւնը. այո՞, թէ ոչ:

- Այո՛, եւ մե՛ծ սիրով:

Հետն ալ չգիտեմ ինչպէս մեկնեցի ձեռքս իրեն: Աղջիկը իսկոյն բռնեց, սեղմեց եւ հագիւ լսելի ձայնով մըն էր, որ ըսաւ.

- Շնորհակալ եմ:

Սկսանք քալել վերստին: Եւ հետն ալ իր հետեւեալ խոստովանութիւնը.

- Այս գիշեր ես շատ երկար մտածեցի՝ դիմե՞մ ձեզի այս խնդիրքով, թէ ոչ: Ձեր մերժումէ՛ն չէ, որ կկասկածէի. ո՛չ, բայց ինքս ալ չգիտեմ՝ ինչու. կամ գուցէ պէտք չէր, որ այս ձանձրոյթը ձեզի տայի. բայց ահա՛, տեսէք, եկեր եմ□

- Այդ խօսքերը կարծեմ անտեղի եւ անելորդ են այլեւս, քանի որ դուք ինձի դիմեցիք մօտիկութեան ու մտերմութեան անունով:

- Իրաւո՛ւնք ունիք. և պատասխանեց շատ կտրուկ շեշտով մը: և ուրեմն ըսէ՛ք, խնդրեմ, ի՞նչ գիրք ճարեմ եւ ե՞րբ սկսիմք: Ես քիչ մը շուտիկ եմ ամէն բանի մէջ. ներող եղէք:

- Գրքի մասին հոգ քաշելու պէտք չկայ. քովս քանի մը կտոր ունիմ, բան մը կընտրեմ. իսկ սկիւր վաղվընէ շուտը չկայ, քանի որ այդքան շուտիկ էք. և կատակեցի ես:

- Աղե՛կ, ուրեմն վաղ առտու ժամը իննին կսպասեմ. հարմա՞ր է ձեզի այս ժամը:

- Բոլորովի՛ն:

- Կա՛տեա: և պոռաց քրոջը. և կվերադառնա՛նք:

Պզտիկը հասաւ մեզ իր շրջանակին հետ ու քալել սկսանք դէպի տուն:

Ու շարունակ կխօսեինք Կատեայի մասին, անոր առանձնայատկություններուն ու բնատրութեանը մասին. եւ Կատեան ինքն ալ խօսքի կխառնվէր:

Այս բոլոր անցածնդարձածը դեռ լաւ մը չեմ մարսած. ինչպէ՛ս արագ եղաւ եւ անակնկալ. ո՞վ կրնար մտածել: Եւ չեմ կրնար ծածկել ինքս ինձմէ, որկայծկլտող ուրախութիւն մը թափանցած է հոգիս: Չարմանալու ալ կարծեմ պատճառ չկայ: չէ՞ որ իմ խօսքերուս ազդեցութեանը տակ եկաւ ան այս որոշման:

Յուլիս 2

Շքթուան մը չափ է սկսած ենք մեր աշխատութիւնը. օրիորդն ալ, ես ալ մեծ եռանդով ենք գործին փարած. նորութիւն է երկուքիս համար ալ:

Ամէն օր պայմանադրուած ժամուն մեծ անհամբերութեամբ կվագեմ Շամիրեաններուն պարտեզը, ուր ստուերախիտ ծառերուն տակ փայտէ պարզուկ սեղան մը կայ ու երկու աթոռ: Տեղը օրիորդը ընտրեց շխանգարուելու համար:

Գրքերէս գատեցի «Դաւիթ Բէկը»: Արդէն քանի մը գլուխ կարդացած ենք: Օրիորդի ընթերցումը գոշ չէ. նոր ու անսովոր բառերը քիչ մը կկզէ: Չարմանալի սուր յիշողութիւն ունի: Եւ անհագ կլսէ թէ՛ լեզուի, թէ՛ մեր կեանքին վերաբերող եւ թէ՛ պատմական բացատրութիւնները, որ անդադար ստիպուած եմ տալու ընթերցանութեան միջոցին:

Երբեմն այնքան լուրջ է ու մտախոհ, որ նոր սկսած ատեննիս կկարծէի, թէ ուշ չի դներ: Օր օրի զարմանքս կաճի. իր հարցերը հոգեկան ծածուկ ապրումներ, խորհրդածութիւն, ն կասկածներ ու դժգոհութիւններ կմատնեն:

Ի՛նչ սխալ գաղափար էի կազմած այդ աղջկան վրայ երեւոյթէն դատելով: Ան ինձի համար աղուոր, գուարթ ու կենսուրախ էակ մըն էր, բայց գուրկ խոր ապրումներէ եւ ամէն լրջութենէ հորանջող: Իր ըրած տպատրութիւնը հիմա այն պատճառով աւելի մեծ է, որ բնաւ չէի սպասէր:

Չիմա ինքս ինձի կհարցնեմ՝ մի՞թէ այդ նափոյթ ու խայտուն կեղեիքն տակ խորունկ հոգի մը կայ պահուտած: Եւ շիտակը չգիտեմ ինչ պատախասանեմ.

վերջին երկու շաբաթուան մէջ այնքան արագ սկսան փոխուիլ կրած տպատրութիւններս, որ հատատ բան մը ըսելու այլեւս չեմ համարձակիր: Այսչափը միայն ինձի համար պարզ է, որ մեր այս նոր աշխատանքէն չափագանց գոհ եմ ու ոգետրուած:

Ձեռականութիւնները շատ շուտով վերացան մեր մէջէն. ո՛չ միայն իմ եւ օրիորդի, այլեւ մեր երկու ընտանիքներու մէջէն: Ամառանոցի մենութիւնն ու ազատութիւնը, երկու տարեկից տիկիներու հաճախակի հանդիպումները, երիտասարդներու իրարու կապուիլը ծնունդ տուաւ մեր երկու ընտանիքներու աւելի սէրտ յարաբերութեան: Նկարիչս պարոն Մկրտիչի հետ ամէն օր կանոնաւոր կերպով կուգայ նարտի կիսադայ. եւ ինչ մեծ ոգետրութեամբ: Երկուքն ալ ինքզինքնին անպարտելի կդաւանին այդ մարզին մէջ, եւ շատ գուարձալի է խաղի ատեն անոնց խօսք ու վէճին ականջ դնելը:

Գալով ինձի՝ ամէն օր ճաշէն առաջ արդէն անոնց եմ. իսկ ճաշէն վերջն ալ, երբեմն Վարդուհին մօրը հետ կըլլայ մեզի, երբեմն նորէն ես կերթամ իրենց, որ իրիկուան դէմ խմբով ելլենք պտոյտի:

Եւ Շամիրեաններուն տան մէջ իմ գրաւած դիրքս քանի կերթայ ուղղակի նախանձելի կդառնայ: Պարոն նկարիչը բացայայտ կերպով ինձի հանդէպ ջերմ համակրանք կցուցադրէ, հակառակ մեր մէջէն անցած մէկկերկու ադիսլեդի վէճերուն. ան միշտ շատ գոհ է, երբ իրեն առիթ ու հնարատրութիւն կտրուի իր պատկերներուն գոյներուն ու երանգներուն եւ նկարչութեան մասին երկար խօսելու. եւ այդ առիթն ու հնարատրութիւնը ես անոր հաճախ կուտամ:

«Դուք քոյրս խելքէ հանեցիք, և կըսէ ինձի քնծիծաղ. և բայց վնաս չունի. պարապ մնալէն աւելի աղեկ է լեզու մը սորուիլը. եւ տեսնենք ինչ պիտի սորուի»:

Իսկ օրիորդիս մայրը ինձի, գիտեմ, որ սիրած ու համակրած է առաջին օրէն: Թէեւ շատ չուզէր, որ աղջիկը ամառն ալ «այսքան մտաւոր աշխատանք ունենայ»: Բայց եւ այնպէս մեր պարապմունքներուն արգելք չէ: Եւ ինչպէս արդէն շատոնց նկատած էի՝ Վարդուհին տան մէջ բոլորովին անկախ դիրք մը ունի, դեռ քիչ մըն ալ տիրապետող:

Աւելցնեն, որ փոքրիկ Կատեայի հետ սաստիկ մտերիմ ենք. երթալուս պէս թելերուս ու ծունկերուս վրայ է. միայն մեր պարապմունքի ժամերուն խստիւ արգիլուած է իրեն մեզի մօտենալը:

Նոյնիսկ բացնդեղին մագերով, կապուտաշուի ոռու սպասուհին առանձին փութկոտութիւն մը ունի դէպի ինձի ու միշտ խորհրդաւոր ժպիտ մը իր շրթունքին:

Այո՛, այս ձեր առաւ իրողութիւնը:

Յուլիս 7

Քանի օր է սովորութիւն են ըրած, երբ ճաշէն ետքը տաքը կոխէ, կբարձրանամ մեր տան ետեւի անտառակը եւ կփռուիմ կոնակիս վրայ ծառերուն տակ: Նոսր սաղարթի ճեղքերուն մէջէն կդիտեմ երկնքի մաքուր բացկապոյտը, ուր հագիւ երբեմն ճերմակ ամպերու փեռեկտումներ, մշտափոփոխ երազական ակներու նման, հանդարտիկ կլողան:

Ու կմտածեմ: Կմտածեմ կա՛մ յաջորդ օրուան մեր ընելիքի մասին, տալիք հարցերս կընտրեմ, նոր գլխուն հետ կապուած բացատրուելիք կէտերը կորոշեմ, բանաւոր շարադրումներու նիւթեր կգատեմ եւ պատմել տալու զանազան ձեւեր կհնարեմ, որ իր արտայայտութիւնը աւելի կենդանի ըլլայ. կա՛մ յիշողութեանս մէջ կվերարտադրեմ առաւօտեան մեր խօսքերը, վէճերը, աղջկան ընթերցումը, ձայնը, դիրքը, ժպիտն ու նայուածքը: Մեր այդ աշխատակցութիւնը կեանքիս մէջ մեծ տեղ է գրաւուած հիմա:

Այս ցերեկ նոյն այդ գիրքին մէջ ծառերուն տակը կերագէի, երբ հարց մը ծնունդ առաւ գլխուս մէջ: Եթէ Վարդուհիին տեղ ուրիշ մը ըլլար՝ այսպէս պիտի տարուէի՞ ու ամբողջովին պիտի նուիրուէի՞: Որոշ պատասխան մը տալու կվարանիմ:

Այո՛, հանձնառութիւնը հանձնառութիւն է եւ ես բարեխիղճ աշխատող մըն եմ ամէն բանի մէջ, բնատրութիւնս գիտեմ: Բայց եւ այնպէս անտարակոյս դիմացիինս աղջիկ մը ըլլալը իր որոշ դէրը ունի. ի՞նչ կայ զարմանալու:

Ամեն պարագայի արդէն պարզ կգգամ, որ մեր պարապմունքները ինծի համար միայն պարտականութիւն եւ գբաղմունք չէ, այլ միեւնոյն ժամանակ խորին հաճոյք մը: Նստած իրենց պարտեցի բաղեղնորու ետին, նեղ սեղանի մը երկու կողմը, այնքան նեղ, որ երբ երկոքս ալ քիչ մը առաջ կհակինք՝ մագերնիս իրար կշոյեն: Եւ թարմ թրթիռներով կանացի ձայն մը, որ մարդուս հոգին կշոյէ, երբ կյուզուի: Եւ իր նայուածքը եւ խնդո՛ւքը: Երբեմն այն գգացումը կունենամ, կարծես գինի խմած ըլլամ, երբ մանաւանդ ինքս լուո՛ւ իրեն խօսիլ կուտամ:

Չգիտեմ, արդեօք ան ալ իր հոգիին մէջ նման հաճոյք մը ունի՞. ինչ գգալը չգիտեմ, բայց անցած օր ինքը ըսաւ, թէ հիմա իր ամբողջ հոգին լեցուած է մեր այս աշխատանքով:

Յուլիս 11

Այսօր ընդհանուր քաղի պէս բան մը ըրինք մեր մինչեւ հիմա կարդացած մասերուն վրայէն, որ մեզի բնական կերպով բերաւ վէպի գեղարուեստական կողմերու վերլուծութեանը եւ երկի ստեղծագործական արժէքին:

Այնպէս տարուեր ու կլանուեր էինք, որ ժամանակին անցնիլը չէինք նկատած: Այն ատեն միայն ուշքի եկանք, երբ մայրը երեւցաւ մեր բաղեղնորուն մէջ ու հրաւիրեց ինծի ճաշի: Ուզեցի շնորհակալութեամբ հրաժարիլ, ընդգծելով, որ տունը հիմա անշուշտ ինծի կսպասեն: Տիտինը ծիծաղելով յայտնեց, որ այդ կո դմէն կրնամ հանգիստ ըլլալ. արդէն ինքը լուր է տուած մեր տունը, թէ ճաշի չեմ երթալու:

Ճաշը անցաւ շատ գուարթ. բոլորս ալ գարմանալի կերպով հրաշալի տրամադրութեան մէջ էինք: Եղբայրը ճաշէն ետքը ինծի իր աշխատանոցը առաջնորդեց, ուր եղած էի միայն անգամ մը հարեւանցի:

- Իրաւ է, թէեւ ցոյց տալու հոս աւարատած բան մը չունիմ եւ իմ լաւ կտորներս կյուսամ օր մը Թիֆլիս կտեսնէք, և ըսաւ պարոն նկարիչը իբրեւ առաջաբան. և բայց եւ այնպէս մարդս միշտ հաճոյք կգգայ իր աշխատութիւնը ուրիշի մը ցոյց տալով:

Եւ պարոնը բնաւ այդ հաճոյքը չի զլացաւ իրեն՝ ի հաշիւ իմ ձանձրոյթիս: Ամբողջ ժամ մը ինձի մէկ կիսատ ու ներկերու մէջ թաթխուած կտաւին առջեւն միսին առջեւը կքաշէր. անդադար խօսելով, մեկնելով ու բացատրելով նկարներուն նիւթը, իր նկարելու եղանակը եւ գոյներու նրբութիւններուն դերը. փաստեր ու օրինակներ կբերէր մեծ նկարիչներու խօսքէն ու կեանքէն:

Ես սկիզբը մեծ հետաքրքրութեամբ կհետեւէի իր խօսքին, բայց հետզհետէ հոգնեցայ. եւ իսկապէս ուրախ եղայ, երբ նորէն դարձանք ընդհանուր սենեակը:

Մայրը առաջարկեց աղջկան, որ աղուոր կտոր մը նուագէ դաշնակի վրայ:

- Ա՛, իմ նուագելս. և առարկեց աղջիկը կէսնհեգտնոտ դէմքի արտայայտութեամբ մը, բայց նստեցաւ աթոռին ու դարձաւ ինձի եւ ըսաւ ժպտուն.

- Այո՛, նուագել ալ գիտեմ, ճիշտ հայերէն կարդացածիս չափ:

Լսած էի, որ կնուագէ, բայց դեռ բնաւ ներկայ եղած չէի իր նուագին. եւ դաշնակն ալ ընդհանրապէս ինձի համար հազիւ ծանօթ աշխարհ մըն էր. եւ հետաքրքիր էի, թէ ինչ տպատրոյթիւն պիտի ընէ վրաս իր նուագը:

Օրիորդը արագ դուրս քաշեց ձայնատետրերու կոյտէն տետրակ մը եւ սկսաւ արագ թղթատել. հազիւ կրցայ կարդալ տետրակի երեսին վրայ Մենդելսոնի անունը:

Ու նուագը սկսաւ: Կդիտէի իր երկար ճկուն ու բարակ մատները, որոնք դաշնակի մատներուն վրայէն կվազէին. կդիտէի իր կարճ կտրած մագերը, որոնք նուագի ամէն ցնցումին ուսերուն վրայ կդողդղային. կդիտէի իր պինդ կծկած շրթունքները, որոնք եղանակի զարկերուն հետ մէջէմէջ աւելի պինդ կկծկուէին. կդիտէի ձանյտատրին հառած իր վառ աչքերը: Բայց եւ կհետեւէի իր իուագածին:

Ու չգիտեմ երաժշտութի՞ւնն էր, որ աղջկան կերպարանքն ու էութիւնը այնպէս հրապուրիչ ու եթերային կդարձնէր իմ աչքերուս, թէ՛ աղջիկն էր, որ իր ներկայութեամբ ու իր շունչով այնքան խոր ու յուզիչ կդարձնէր երաժշտութիւնն իմ ականջներուս:

Գիտեն միայն, որ հոգիս ավելոծուած էր:

Քիչ մը վերջը կանչատուէի. ու խոհուն դէմքով՝ փոխանակ տուն երթալու՝ իջայ շիտակ ձորը ու կոթնեցայ մամռոտ խոշոր ժայռի մը, որուն վրայ ծուռ ու մուռ ոտենի մը ստուեր կնետէր:

Կէսկեցած, կէսնատած ականջ կոնէի գետի խելագար աղմուկին ու կղիտէի անոր անվերջ գալարումներն ու եռանքը ժայռերու գրկին: Ժամանակը կրոշէր՝ գիտէի. բայց չէի ուզէր տեղէս երերամ. մեղկութիւնը մը տիրած էր հոգիիս: Կցանկայի այդպէս մնամ անշարժ այդ աղմուկին մէջ անվերջ խոհուն:

Բայց ի՞նչ կխորհէի. ոչի՛նչ. կամ գրեթէ ոչինչն: Երագի պէս բան մըն էր. դաշնակ մը կար աչքերուս դէմ, որուն վրայ Վարդուհիին նուրբ ու երկար մատները կվազէին եւ արժշտութիւն մը կար իմ հոգիիս մէջ:

Յուլիս 14

Իմ արդի բոլոր մտածումներս կեդրոնացած են ամբողջուն մեր միասին պարապմունքի ժամերուն վրայ: Առտուները անբնական անհամբերութեամբ որոշեալ ստենին կսպասեմ. եւ միշտ տեսակ մը անհանգիստ ուրախութեամբ կվազեմ Շամիրեաններուն բնակարանը, ուր սովորաբար պատշգամին իսկ վրայ կհանդիպիմ «աշակերտիս», որ նոյն անհամբերութեամբ ինձի կսպասէ:

ան ալ բոլորովին ոգետրուած է հիմա մեր զբաղումներով: Գրքի ներկայացուցած հայ կեանքը, հայ տիպարները բուն հայ հողին վրայ, հայ լեռներն ու մեր լեռնական այդ մօտիկ անցեալը Վարդուհիին համար հիմնովին նոր աշխարհ մըն է, որ կբացուի անոր աչքերուն ու հոգիին առջեւ: Եւ երբ կմտածեմ, որ իմ ներշնչումիս ջերմութեան տակ փթթեցաւ այդ թարմ ու նոր զգացումներուն ծաղիկ՝ը կուցծքս բախտաւորութեամբ կուտի:

Հաճախ կպատմեմ հիմա մեր կեանքէն, գաւառէն, մեր բնութեան գեղեցկութիւններէն, մեր ժողովրդի դատնութիւններէն: Կնկարեմ իր դէմ իմ երագներս եւ այդ հողին վրայ ծլելիք ապագայ քաղաքակրթութիւնը: Կգծեմ մեր բոլորիս պարտքը եղող աշխատանքը՝ քայլ մը ավելի ընելու համար դէպի մեր

երագներու ապագան:

Աղջիկը կլսէ ինծի՝ աչքերը աչքերուս, անթարթ: Կամ ինքը կպատմէ իր կեանքէն, կղժգոհի մեր հանրային կաշկանդող պայմաններէն, իր դպրոցական կեանքէն. մանր ու խոշոր, հետաքրքիր ու երկրորդական անվերջ նիւթեր, որոնք սակայն իր հոգին կբանան ինծի եւ ես անհուն ուշադրութեամբ կունկրնդրեմ: Ու հետզհետէ մեր գաղափարները կնոյնանան. մեր ձգտումները իրարու կձօտենան. մեր իդեալները, մեր անուրջները իրարմէ գոյն ու ձեւ փոխ կառնեն:

Եւ մենք ասիկա կգգանք փոխադարձաբար. ու ալ ասելի իրարու կմտերմանանք բնականաբար:

Յուլիս 19

Երեկ մեր աշխատանքը դիտմամ քիչ մը կարճ կապեցի. եւ ետքն ալ ազատ ժամանակէն օգտուելով խնդրեցի, որ մեկնելէս առաջ կտոր մը նուագէ. իբրեւ թէ պատահմամբ եղաւ: Բայց անպիտանը իսկոյն ըմբռնեց: Հագիւ քիչ մը նուագած էր, որ հիւրեր եկան ու խանգարուեցաւ:

Եւ այսօր երբ կարդացած գլուխը վերջացուց, ինքը գոցեց գիրքը, գոցեց եւ աչքերը կհստվին եւ ըսաւ նենգամիտ.

- Այսօր կարծես թէ ասելի երաժշտական է տրամադրութիւնս. արդեօք չէի՞ք ցանկար, որ բան մը նուագեմ ձեզի:

Եւ առանց պատասխանիս սպասելու ցատկեց ոտքի, քաշեց ձեռքէս, խնդաց լի կուրծքով, մազերը ճակտէն ետ նետեց ու սլացաւ դէպի սանդուղները: Ես ալ բնականաբար ետեւէն:

Մինակ էինք՝ ես ու ինքը: Ու դաշնակը կթնդար: Տարբեր ոգետրութեամբ մը կնուագէր. լանջը կդողդղար, մազերը կցատկոտէին, այտերը վարդ էին կտրեր, թարթիչները արագ կթարթէր, եւ իր փղոսկրէ դաստակները կվազէին դաշնամուրի մատներուն վրայ:

Այսօր արդէն երաժշտութիւնը չէր, որ կգգայի. այսօր ինքն էր իր ամբողջ
էութեամբ իմ երաժշտութիւնս:

Երբ նուագը դադրեցաւ՝ Վարդուհին բռն շարժումով մը ցատկեց ու եկաւ ինձի.

- Գո՞հ էք:

Առանց պատասխանի բռնեցի իր ձեռքը, սեղմեցի ու ալ ձգել չէի ուզեր: Ան ալ
իմս կսեղմէր:

Մինչեւ սանդուղներուն գլուխը եկաւ ինձի ճամփու դնելու: Եւ նորէն առանց
խօսելու սեղմեցինք անգամ մըն ալ իրարու ձեռք ու բաժնուեցանք:

Արտասովոր դանդաղ քայլերով ուղղուեցայ տուն. նոյն ծանր շարժումներով
բարձրացայ սենեակս ու նստեցայ գրասեղանիս առջեւը աչքերս պարտէզի
ծառերուն հառած:

Որչափ տեւեց այդ անշարժութիւնս՝ չգիտեմ. բայց ցնցուեցայ, երբ լսեցի, որ
շրթունքներս կըսէին ցած ու խիստ յստակ խօսուածքով մը.

«Կսիրե՛մ, կսիրե՛մ»:

Ու սկսայ մտածել ու սկսայ յիշել բոլոր անցածնդարձածը այս քանի մը
շաբաթներու ընթացքում իմ ու այդ աղջկան միջեւ. եւ ընթրնեցի, որ ես սիրած էի
այդ աղջիկը առաջին տեսած օրէս: